ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում 25.07.2014թ տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին

Ս.Մնացականյան ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ
Ն. Մովսիսյան մարզպետի տեղակալ
Մ Աբգարյան մարզպետի տեղակալ
Հ.Գևորգյան մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Հ.Օհանյան ՀՀ ՏԿՆ վարչական վերահսկողության բաժնի պետ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

ՀՀ Արագածոտնի մարզի խորհրդի նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

25.07.2014թ. ժ. 10.00

1. Գյուղատնտեսական համատարած հաշվառման կարևորության և նախապատրաստման աշխատանքների ընթացքի, մարզային հանձնաժողովների և համայնքապետերի կողմից ցուցաբերվելիք օժանդակության մասին: / ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ՝ Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/:

2. Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների, հողի հարկի և գույքահարկի վարվող շտեմարաններում /բազաներում/ տեղ գտած անճշտությունների վերացման մասին /զեկ. մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ/:

3. Համայնքների ղեկավարների կողմից քաղաքացիներին տրվող անձի ինքնության մասին տեղեկանքների տրամադրման գործընթացի վերաբերյալ /զեկ. մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ/:

4. Հողի բերրի շերտի ապօրինի հանման և տեղափոխման կանխարգելմանն ուղղված աշխատանքների մասին / զեկ. գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱԶԱՏՅԱՆ/:

5. ՀՀ գյուղական բնակավայրերում գործող համայնքային ենթակայության առողջապահական կազմակերպությունները բաժնետիրական ընկերություններից համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմավորման գործընթացի մասին / զեկ. մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ /:

6. Մարզի համայնքներում երեխայի ծննդի գրանցման, երեխայի ընտանիքում ապրելու և խնամատար ինստիտուտի զարգացման հիմնախնդիրների մասին / զեկ. մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ /:

7. Մարզի համայնքներում ամառային շոգ եղանակին վարակներից խուսափելու համար կատարվելիք աշխատանքների և հակահամաճարակային գործընթացի պատշաճ կազմակերպման մասին /զեկուցող՝ մարզպետարանի աշխատակազմի առողջապահության բաժնի պետ Ս. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/:

8. Հայտարարություններ:

Հուլիսի 25-ին Արագածոտնի մարզպետարանում կայացավ մարզխորհրդի նիստ: Մարզպետ Սարգիս Սահակյանը ներկայացրեց օրակարգը և ասաց, որ մինչ այդ հարցերին անցնելը, տեղի կունենա գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստությանն ու անցկացմանը նվիրված քննարկում եւ ներկայացրեց այդ նպատակով նիստին մասնակցության եկած ՀՀ Ազգային Վիճակագրական ծառայության պետ Ստեփան Մնացականյանին: Ծառայության պետը համայնքապետերին փոխանցեց ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանի շնորհակալությունը՝ 2011 թվականին կայացած համընդհանուր մարդահամարին վերջիններիս լավագույն մասնակցության համար: Ապա ամենայն մանրամասնությամբ ներկայացրեց գյուղատնտեսության համատարած հաշվառման/ԳՀՀ/ գործընթացին վերաբերող նյութերը: Համապետական այդ ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի կողմից սահմանված կանոնակարգով՝ համաձայն 2006 թվականին ընդունված համապատասխան օրենքի: Ստեղծվել է գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստության ու անցկացման համապետական հանձնաժողով, որը ղեկավարում է ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանը, իսկ մարզային հանձնաժողովը ղեկավարելու է մարզպետ Սարգիս Սահակյանը: Համայնքապետերն իրազեկվեցին հաշվառման նպատակների և կարևորության, անցկացման աշխատանքային փուլերի, մեթոդների և այլ հարցերի մասին: Թեմայի շուրջ ծավալվեց բուռն քննարկում: Համայնքապետերը հարցադրումներ արեցին հաշվառման գործընթացում հաշվարարների ներկայացման, մասնավորապես համայնքապետարանների աշխատակիցների ընդգրկման, տեղամասերի տրամադրման, հողատարածքների հաշվառման և այլ հարցերի շուրջ:

Նիստի երկրորդ մասում քննարկվեցին օրակարգային մյուս հարցերը: Մինչ դրանց անդրադառնալը, մարզպետը շնորհակալություն հայտնեց Ոսկեվազի և Շամիրամի համայնքապետերին՝ 7 ամսվա կտրվածքով սեփական եկամուտները ավելի քան 100 տոկոսով հավաքագրելու համար:

Օրակարգի հաջորդ հարցերին անդրադառնալիս, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն.Գալստյանը խոսեց համայնքների սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների, հողի հարկի և գույքահարկի վարվող շտեմարաններում տեղ

գտած անճշտությունների վերացման և նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ կապված օրենքում կատարվող փոփոխությունների մասին: Այնուհետև մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. Հովսեփյանը ներկայացրեց համայնքների ղեկավարների կողմից քաղաքացիներին տրվող անձի ինքնության մասին տեղեկանքների տրամադրման գործընթացի պատշաճ կերպով կազմակերպելու, գյուղական բնակավայրերում գործող համայնքային ենթակայության առողջապահական կազմակերպությունները բաժնետիրական ընկերություններից համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմավորման գործընթացի և ավագանու որոշումները ժամանակին ներկայացնելու հարցերը: Համայնքի ղեկավարներին տեղեկացվեց, որ անհրաժեշտ է կատարել բոլոր նախապատրաստական աշխատանքները՝ <<ՀՀ Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014թ հիմնական միջոցառումների պլան>>-ի իրականացման համար:

Հողի բերրի շերտի ապօրինի հանման և տեղափոխման կանխարգելմանն ուղղված աշխատանքներին, դիզ.վառելիքի, պարարտանյութի, սերմացուի պահանջարկի և գումարների հավաքագրման հարցերին անդրադարձավ գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. Ազատյանը:

Մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Գ. Դանիելյանը իր ելույթում ներկայացրեց երեխայի ծննդի գրանցման, երեխայի ընտանիքում ապրելու և խնամատար ինստիտուտի զարգացման հիմնախնդիրները և նշեց, որ 2014 թվականը հայտարարվել է Ընտանիքի միջազգային տարի:

Նիստի ավարտին մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ Ս.Թադևոսյանը , կարևորելով էնտերովիրուսային մենինգիտ հիվանդության համաճարակի վտանգը, համայնքի ղեկավարներին առաջարկեց աջակցել համայնքային ենթակայության առողջապահական կազմակերպություններին հակահամաճարակային միջոցառումներ կազմակերպելու հարցում:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ